ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԴԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

DISTRICT OF ARAGATSOTN
VILLAGE DIAN COMMUNITY
COUNCIL

dian. aragatsotn@mta.gov.am
Արագածոտնի մարզ, գ.Դիանի
համայնքապետարան
փողոց 1 նրբ 1 շենք 6

Հեռ.093-42-01-78

District of Aragatsotn village
Dian community council
street 1 alley 1 bulding 6

13.05.2020թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ

պարոն Դ. Գևորգյանին

Հարգելի՛ պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտնի մարզի Դիան համայնքի ավագանու թիվ 8 և 9 որոշումները:

Համայնքի ղեկավար՝ /Ռ. Հմայակյան/

ՀՀ Արագածոտնի ...
աշխատակազմի ...
13 05 20
Մուտք N 05537-20

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

dian.aragatsotn@mta.gov.am
Արագածոտնի մարզ, գ. Դիան
Հեռ. 093-42-01-78
12.05.2020թ.

## Որոշում

12 մայիսի 2020թ. № 9

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դիան համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 12-ի № 9 որոշումից

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի № 16 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Դիան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Դիան համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող, 0018-0001 կադաստրայի ծածկագրից 430 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելուն 456 000 ՀՀ դրամ վարձավճարով:
2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործերը և ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետի համաձայնեցման:

Կողմ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանու անդամներ՝
1. Ռ. Համազասպյան
2. Ս. Ղազարյան
3. Մ. Մահմուդյան

Համայնքի ղեկավար՝ /Ռ.Հմայակյան/

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԴԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

dian.aragatsotn@mta.gov.am
Արագածոտնի մարզ, գ. Դիան
Հեռ. 093-42-01-78
08.04.2020թ.

## Որոշում

08 ապրիլի 2020թ. № 8

ՀՀ Արագածոտնի մարզի Դիանի համայնքապետարանի ղեկավարի 2020 թվականի տեղական բյուջեի առաջին եռամսյակային հաշվետվության մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և <<բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով համայնքի ավագանին որոշում է.

Դիան համայնք ղեկավարի հաղորդումը 2020թ.-ի տեղական բյուջեի 1-ին եռամսյակային հաշվետվության կատարման մասին.

Համայնքի ավագանին համարեց բավարար:

Կողմ 3 դեմ 0 ձեռնպահ 0

Ավագանու անդամներ՝

1. Ռ. Համազասպյան
2. Ս. Ղազարյան
3. Մ. Մահմուդյան

Համայնքի ղեկավար՝ /Ռ.Հմայակյան/